ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային միգրացիայի կարգավորման մասին» համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային միգրացիայի կարգավորման մասին» համաձայնագիրը ստորագրվել է ս.թ. փետրվարի 12-ին՝ Բուլղարիայի Հանրապետության նախագահ Ռումեն Ռադեվի և նրա գլխավորած պատվիրակության՝ Հայաստան կատարած պաշտոնական այցի ընթացքում: Համաձայնագիրը ստորագրել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը և Բուլղարիայի Հանրապետության աշխատանքի և սոցիալական քաղաքականության նախարար Բիսեր Պետկովը:

Համաձայնագիրը կնպաստի երկու պետությունների միջև աշխատանքային միգրացիայի արդյունավետ կարգավորմանը և աշխատանքային միգրանտների իրավունքների ու շահերի պաշտպանությանը:

Համաձայնագրով նախատեսված է Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային պայմանագիր կնքած աշխատողների կատեգորիաների շրջանակը, ովքեր իրավունք ունեն առանց աշխատանքի թույլտվության իրականացնել աշխատանքային գործունեություն՝ ընդունող կողմի տարածքում կացության անհրաժեշտ թույլտվության առկայության դեպքում: Փաստաթղթով սահմանվում են նաև Համաձայնագրի համար պատասխանատու Կողմերի Լիազորված մարմինները, Համաձայնագրի իրականացման համար նշանակված Իրավասու հաստատությունները, ինչպես նաև Համաձայնագրի շրջանակներում ստեղծված Համատեղ ընտրական հանձնաժողովի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության քաղաքացիների, ինչպես նաև նրանց ուղեկցող ընտանիքի անդամների մուտքի, գտնվելու և զբաղվածության կարգավորմանն առնչվող, աշխատանքի ընդունման միջնորդության, միգրանտ աշխատողների աշխատանքային պայմանների, սոցիալական իրավունքների և վերադարձի մասին դրույթներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նպատակահարմար է գտնում «Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային միգրացիայի կարգավորման մասին» համաձայնագրի վավերացումը: